



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/93/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

16 ապրիլի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Արմեն Մարությանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի ապրիլի 16-ին քննելով ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության երրորդ վարչության ՀԿԳ քննիչի Ալիկ Գառնիկի Կարապետյանի կողմից պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ թիվ ՎԻՎ/93/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, նույն օրենքի 26.1-րդ և 26.2-րդ հոդվածներով սահմանված կարգով Ալիկ Գառնիկի Կարապետյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում, ուսումնասիրել է վերջինիս գույքային դրությունը, այդ թվում նաև նախկինում ներկայացված հայտարարագրերը, որի ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացնելով հայտարարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում արձանագրել է հետևյալը՝ պաշտոնատար անձի՝ 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրի տարեվերջում հայտարարագրել է 757,960 ՀՀ դրամ բանկային ավանդի մնացորդ, իսկ Հայտարարագրի տարեկազբին՝ 4,257,960 ՀՀ դրամ (757,960 ՀՀ դրամ և 3,500,000 ՀՀ դրամ) բանկային ավանդի մնացորդներ: Առկա է անհամապատասխանություն 2022 թվականի տարեվերջին և 2023 թվականի տարեկազբին հայտարարագրված բանկային ավանդների միջև:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի ապրիլի 9-ին Ալիկ Կարապետյանին հասցեագրել է թիվ 01/1254-2025 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 15:00-ին Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 12:00-ին գործի քննությանը մասնակցելուն, որի վերաբերյալ Ալիկ Կարապետյանը պատշաճ ծանուցվել է (հիմք՝ տեղեկանք, AL0127408096AM ծանուցագիր):

1.3 2025 թվականի ապրիլի 14-ին պատշաճ ծանուցված Ալիկ Կարապետյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 55/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Ալիկ Կարապետյանի բացակայությամբ 2025 թվականի ապրիլի

16-ին, ժամը՝ 12:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Ալիկ Կարապետյանը 2025 թվականի ապրիլի 16-ին Հանձնաժողով է ներկայացրել գրավոր պարզաբանում, որով հայտնել է հետևյալը. «2022 և 2023 թվականների իմ գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրերում առկա անհամապատասխանության վերաբերյալ հայտնում եմ, որ 2022 թվականի տարեվերջին «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում ունեցել եմ 757.960 ՀՀ դրամ ավանդ, որը հայտարարագրել եմ 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում (այսուհետ նաև՝ հայտարարագիր):

2023 թվականի հունվարի 16-ին նույն բանկում ունեցած 757.960 ՀՀ դրամ ավանդին ավելացրել եմ իմ խնայողություններից գոյացած 943.000 ՀՀ դրամ գումար և նշված ավանդի չափը կազմել է 1.700.000 ՀՀ դրամ (պայմանագիր թիվ 021/6Q0/20/00204):

2023 թվականի մարտի 31-ին իմ դիմումի համաձայն ազատվել եմ Գեղարքունիքի մարզի դատախազության ավագ դատախազի պաշտոնից:

2023 թվականի ապրիլի 11-ին ՀՀ դատախազությունից, որպես վերջնահաշվարկ, ստացել եմ 6.547.091 ՀՀ դրամ գումար, որից 3.500.000 ՀՀ դրամ գումարը նույն բանկում 2023 թվականի նոյեմբերի 18-ին ներդրել եմ որպես ավանդ (պայմանագիր թիվ 021/259/23/00316):

2023 թվականի տարեկան հայտարարագրի «Բ 4, Հանձնված և վերադարձված փոխառություններ, բանկային ավանդներ» բաժնում հայտարարագրել եմ նշված երկու ավանդներս, մասնավորապես՝ 2023 թվականի «Տվյալ տարվա սկզբում տվյալ բանկում առկա ավանդի գումարը» սյունակում նշել եմ 757.960 ՀՀ դրամ, իսկ «Տվյալ տարվա վերջում տվյալ բանկում առկա ավանդի գումարը» սյունակում՝ 1.700.000 ՀՀ դրամ: Մյուս ավանդի վերաբերյալ 2023 թվականի «Տվյալ տարվա սկզբում տվյալ բանկում առկա ավանդի գումարը» սյունակում նշել եմ 3.500.000 ՀՀ դրամ, իսկ «Տվյալ տարվա վերջում տվյալ բանկում առկա ավանդի գումարը» սյունակում նույնպես 3.500.000 ՀՀ դրամ: Այսինքն՝

տարվա սկզբում և տարվա վերջում բանկում առկա ավանդի գումարի չափն իմ կողմից նշվել է նույն՝ 3.500.000 ՀՀ դրամի չափով, որի պատճառը զուտ տեխնիկական վրիպակն է, այսինքն՝ մեխանիկորեն երկու սյունակներում էլ նշել եմ նույն չափի գումար: Սակայն, ինչպես վերը նշեցի, 1.700.000 ՀՀ դրամի չափով ավանդի գումարի 2023 թվականի տարեսկզբի և տարեվերջի չափերի մասին հայտարարագրի՝ «Բ 4, Հանձնված և վերադարձված փոխառություններ, բանկային ավանդներ» բաժնում նշված է, որ ես 2022 թվականի տարեսկզբին ունեցել եմ 757.960 ՀՀ դրամ ավանդ, այսինքն՝ իմ կողմից հայտարարագրում 2022 թվականի տարեսկզբին ունեցած ավանդի չափի մասին ճիշտ տեղեկությունը նշված է 1.700.000 ՀՀ դրամի չափով ավանդի մասին տեղեկությունները հայտարարագրելով:

Գտնում եմ, որ 2023 թվականի իմ գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ չեմ ներկայացրել, այլ հայտարարագիրը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով եմ ներկայացրել լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կարգի խախտմամբ, մասնավորապես՝ մեխանիկորեն երկու ավանդներից մեկում 2022 թվականի տարեսկզբի և տարեվերջի գումարի չափը նույնությամբ նշելով 3.500.000 ՀՀ դրամ: (...)»

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/93/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության երրորդ վարչության ՀԿԳ քննիչի Ալիկ Գառնիկի Կարապետյանը հանդիսանում է հայտարարատու պաշտոնատար անձ:

3.2 Ալիկ Կարապետյանը 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրի «Բ.4.3. Բանկային ավանդներ» բաժնում տարեվերջում հայտարարագրել է 757,960 ՀՀ դրամ բանկային ավանդի մնացորդ, իսկ Հայտարարագրի

«Բ.4.3. Բանկային ավանդներ» բաժնում տարեսկզբին՝ 4,257,960 ՀՀ դրամ (757,960 ՀՀ դրամ և 3,500,000 ՀՀ դրամ) բանկային ավանդի մնացորդներ:

3.3 Այլ Կարապետյանը Հանձնաժողով է ներկայացրել 2023 թվականի նոյեմբերի 18-ի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ֆիզիկական անձի «Անսահման» ժամկետային ավանդի թիվ 021/259/23/00316 պայմանագիրը, որի համաձայն 3.500.000 ՀՀ դրամ գումար է ներդրել որպես ավանդ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ բանկային ավանդը:

4.3 Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են՝ բանկային ավանդի դեպքում՝ հաստատության անվանումը, գտնվելու վայրը (եթե Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է), բանկային ավանդի չափը:

4.4 Օրենքի 40-րդ հոդվածի 6.1-ին մասի համաձայն՝ բանկային ավանդի դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա ավանդի չափը, արժույթը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա ավանդի դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, **Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության երրորդ վարչության ՀԿԳ քննիչի Ալիկ Գառնիկի Կարապետյանը Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ որպես հայտարարագիր ներկայացնելու

պարտականություն կրող անձ, Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ և ոչ ամբողջական տվյալներ, այն է՝

Ալիկ Կարապետյանը Հայտարարագրի «Բ.4.3.Բանկային ավանդներ» բաժնի «Տվյալ տարվա սկզբում տվյալ բանկում առկա ավանդի գումարը և արժույթը» ենթաբաժնում հայտարարագրել է 4,257,960 ՀՀ դրամ, մինչդեռ պետք է հայտարարագրեր 757,960 ՀՀ դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Տվյալ դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ թեև Ալիկ Կարապետյանը Հայտարարագրի «Բ.4.3.Բանկային ավանդներ» բաժնի «**Տվյալ տարվա սկզբում** տվյալ բանկում առկա ավանդի գումարը և արժույթը» ենթաբաժնում **տվյալ տարվա նոյեմբեր ամսին** ներդրված 3,500,000 ՀՀ դրամի չափով ավանդի գումարը որպես տվյալ տարվա սկզբին առկա մնացորդ հայտարարագրելով՝ խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 6.1-ին մասը և թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք, այդուհանդերձ այն ունի նվազ նշանակություն, քանի որ վերջինիս կողմից ավանդի վերաբերյալ տվյալը սխալմամբ նաև «**Տվյալ տարվա սկզբում** տվյալ բանկում առկա ավանդի գումարը և արժույթը» ենթաբաժնում հայտարարագրելը Հանձնաժողովին չի զրկել հայտարարատու պաշտոնատար անձի գույքային դրության մասին ամբողջական

պատկերացում կազմելու հնարավորությունից: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ 2022 թվականի տարեկան հայտարարագրում տարվա վերջի դրությամբ վերը նշված ավանդի գումարը չի հայտարարագրվել, ինչպես նաև չի հայտարարագրվել 2023 թվականի մայիսի 16-ին ներկայացված՝ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրում:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ալիկ Գառնիկի Կարապետյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալիկ Գառնիկի Կարապետյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Ալիկ Գառնիկի Կարապետյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ